


891.99

7-34

# Հ. ՊԱՐՈՆՅԱՆ



891.99

7-34

ՊՐԱԿ ՅԵՐՐՈՐԴ

19 NOV 2011

891.99  
7.34 48

# ՀԱԿՈՒՐ ՊԱՐՈՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋԵՐ  
ՀՈՍՈՍԻ ՁԵՌԱՏԵՏՐԸ  
ԾԻԾԱՂ

1001  
3364

ՊՐԱԿ ՅԵՐՐՈՐԳ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ, 1927

### ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋԵՐ.

«Ազգային Ղոջերով» Հակոբ Պարոնյանը տալիս է մի շարք ազգային «հասարակական գործիչների» յերգիծական բնույթագիրը: Դրանք սրամիտ կենսագրականներ են, նվիրված՝ թվով 24 «Ղոջերի»: Թեև Պարոնյանը չի գլանում իր «հերոսների» բացասական կողմերի հետ միասին շեշտել նաև դրական կողմերը, յեթե կան, բայց նրա յերգիծական գրչին նյութ են մատակարարում իր «Ղոջերի» գլխավորապես պակասավոր կողմերը: Դրանք սովորական բնույթագրեր չեն, ի հարկե, վորովհետև տաղանդավոր յերգիծաբանը գունավորում է իր «Ղոջերի» մտավոր բարոյական հատկությունները, նույն իսկ Փիղիբականը: Յե՛վ հենց դրա մեջ է յերգիծանքի էյությունը: Այդ գործիչները Պարոնյանի գրչի տակ դառնում են տիպեր: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, վոր Հնայած այդ «Ղոջերից» շատերին մենք չենք ճանաչում, բայց նրանց յերգիծորեն գծված կենսագրականը կարդում ենք հաճությամբ և հետաքրքրությամբ: «Ղոջերի» անունն ու գործելու վայրը կորչում է մեր հայեցողության սահմանից և մեր առջև պատկերանում է «հասարակական գործիչի» այս կամ այն տիպը:

Այդ 24 «Ղոջերից» հարմար ենք համարում ընտրել չորսին—Խորեն Գալֆայան (Նարբեյ), Տիգրան Յուսուֆյան, Իփեկչյան եֆենտի և Կարապետ բեյ Յերամյան, վորոնց «կենսագրականները» տալիս ենք կրճատված ձևով:

Հ. Հով.

---

Կազմեց՝ Հ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

---

Խորեն յեպիսկոպոս, աստվածաբան, կատակերգակ, ազգային յերեսփոխան\*), բանաստեղծ, 1861-ին Գալֆայան, 1870-ին Նար-պեյ, 1879-ին Լուսինյան—մինչև նոր տնորենութուն—ծնավ Կ. Պոլիս, 1841 թվականին: Ծնած գիշերը յերեք տեղ հրդեհ պատահեցավ...

Խորեն չուշացավ հայտնել, թե յուր ծնունդովն բանաստեղծ մ'ալ ավելացավ ազգին և վոչ թե փորձանք, ինչպես կը գուշակեյին քանի մը հեռատես մարդեր. վասընզի յերբ մանկաբարձն անոր վոտներուն վրա դիտողութուն կըներ, տասնևվեցոտյան վոտանավորներն միշտ այսպես կը վերջանան, պատասխանեց յերեխա բանաստեղծն, վոր ազգային քերթող (բանաստեղծ) պիտի հորջորջվեր որ մը մեր ազգային համբակ... սափրիչներեն:

Նախազգացմամբ գուշակեց կարծես, թե որ մը ձեռք պիտի քաշեր այս աշխարհիս վաղանցուկ հաճույքներեն, թե յուր կյանքն աստուծո ծառայութեան նվիրելով մեծ քաղցրութուն պիտի զգար, ուստի որ մը աչերն վեր առնելով կնկան մը յերես չեր նայեր... բազմութեան մեջ: Փութանք ավելցնել, մեկե մը տեսնվելու կասկած կամ յերկյուղ չունենցած ատենն ալ չեր նայեր կիներու... յեթե ծեր ըլլային: Հետևապես կուսակրոն ըլլալու համար ամեն տրամադրութուն ուներ:

Հայրը տեսնելով, վոր տղան վարդապետ ըլլալու սիրով կը տոչորի, վորոչեց Վենետիկի վանքը զրկել զինք:

Յերբ Վենետիկ հասավ Խորեն ու վանահոր ներկայացավ, վանահայրն անոր շարժումներն դիտելով, հայտ-

\*) Վաթսունական թվերին հայերին տրվեց Թյուրքիայում ազգային սահմանադրութուն, վորով նրանք ունեցան ազգային ներկայացուցիչներ (յերեսփոխան) ժողով, դատական, կրոնական անտեսական, ուսումնական մարմիններ, թաղական ժողովներ և այլն:

Հ. Հով.

նեց, թե անկարելի յեր գայն դպրոցի մեջ առնելը. վորովհետև,—ավելցուց,—վանքին տրամադրած որենքներուն հակառակ եր իդական սեռեն աշակերտ ընդունելը: Մեծ դժվարութուն կրեցին համոզելու համար վանահայրն, թե աղջիկ չեր իրեն ներկայացվողը:

Խորեն այն ատեն վորչափ սրամիտ, նույնչափ ալ խառնակիչ եր: Վանահոր ականջներն ալ խուլցած ըլլալով այն տրտունջներեն, զորս Խորենի դեմ կընեյին յուր դասընկերները, վորոշվեցավ, վոր ի պատիժ յուր անվայել վարքին վարդապետ ձեռնադրվի: Այս ըլլալու յեր խելոք չկեցող աշակերտներուն համար վանքին սահմանած պատիժը:

Այն ժամանակները մայրաքաղաքիս հարուստներն վոմանք իրենց ձիերուն ապագա պատրաստելու նպատակով, անոնց համար հոյակապ ախոռներ կառուցանելն յետքը՝ իրենց գավակներուն համար ալ դպրոց մը շինելու գաղափարը հղացան. բայց վորովհետև Կ. Պոլսո մեջ դպրոցի հարմար տեղ մը գտնելն անկարելի յեր, վորոչեցին, վոր Բարիզի մեջ բանան այս դպրոցն, վորուն մեջ պիտի դաստիարակվեյին իրենց գավակներն և թերևս իրենց ձիերն ալ, յեթե հոս գործ չունենային: Իրենց այս վորոշումին ծնունդ տվին Բարիզի մեջ դպրոց մը շինելով... ավագի վրա:

Խորեն յեպիսկոպոս ամենեն շատ ոգուտ քաղեց այդ դպրոցեն. մեծ քայլեր առավ հոն դեպ ի Պատնասա գագաթ. հոն կատարելագործեց մուսանբու արվեստը: Սա ինքն է, վոր յուր վկայութեանը նայելով, յերկու ամիս աշխատելն յետքը հետեյալ գյուտն ըրավ.

Զյուր անվան կոչ

Գիտե՞ս,—վոհ, վոչ:

Թեպետև՝ պատմաբաններն վոմանք հոմերոսի կընծայեն այս յերևելի գյուտն, վոր ժամանակագրութունի յե-

րեվելի անցից-ին կարգը դրվելու մոռցված է դժբախտաբար, սակայն մենք պնդելով կը պնդենք, վոր այս գյուտին փառքը Սորենի միայն կը պատկանի:

Քաջ գիտենք, վոր Սորեն յեպիսկոպոս այս գյուտն ընելեն անմիջապես յետքը հեալով կը վազե յեղբորը և անոր կիմացնէ: Յեղբայրն նախ չուզեր հավատալ. ասանկ գյուտի մը գյուտն անհնար կթվի իրեն, բայց վերջապես կը համոզվի և յեղբորը փաթտըվելով—Սորեն, կըսե, մեծ ծառայութիւնն ըրիր ազգին այդ գյուտովդ. ազգը պարտավոր է յերախտագետ մնալ քեզ համենայն ավուրս կենաց յուրոց:

1878-ին իբրև ազգային նվիրակ Սրիմյանի հետ Պերլինի Ավագաժողովը դրկվեցավ Սորեն: Թեպետ և չգիտցվեցավ, թե ինչու չկրցին Ավագաժողովին ներկայանալ, սակայն շատերը պնդեցին այն ատեն, թե ազգը մեծ ոգուտ քաղեց անոնց ուղեորութենէն, թե ձայն հանելու չէ, այդ ոգուտին ինչ ըլլալը վերջէն պիտի հասկցվի: Ասոր համար է, վոր շատերն իրենց բերանը բացած՝ գործերուն վերջը դիտելու կը պատրաստվին: Յեթե այս ոգուտներուն յերևակայականն մեկդի նետելով իրականին դառնանք, սա ոգուտը կը գտնենք, վոր առաջ գավառներու մեջ յեթե տարին հարյուր հոգի կսպաննըվեյին, այսոր հազար կսպաննըվին, և այս ալ անշուշտ մեծ ոգուտ է անոնց, վորք բազմութենէ չեն արտրժիր:

Չափազանցութիւնն ըրած չենք ըլլար, յեթե ըսենք, թե Սորեն յեպիսկոպոսն իբրև մատենագիր ավելի ծառայած է ազգին, քան իբրև կուսակրոն: Յուր աշխատասիրութիւններուն մեծ մասը 1879-ին Բերայի հրդեհին հրո ճարակ յեղան, ինչպես վոր կըլլան դժբախտաբար այն ամեն յերկասիրութիւններն, վորք տպված չեն... գրված չեն: Այդ գործերու մոխիր դառնալն մեծ կորուստ մ'է անշուշտ ազգին համար, բայց կրնանք մխիթարվի-

յուր հրատարակած գործերով, վորոնք քիչ բացառութեամբ արժանիք ունեյին... մոխիր դառնալու:

Սորեն յեպիսկոպոս անուշ բնավորութիւնն մ'ունի: Ամենուն հետ այնպես կ'վարվի, ինչպես վոր խմբագիր մը կը վարվի այն մարդուն հետ, վոր տարվան մը բաժանորդ կը գրվի և բաժանորդագիրն ալ կանխիկ կը վճարե: Վարքեն կրնանք գուշակել, թե յուր հարգած սկզբունքներն հետևյալներն ըլլալու յեն.

«Սիրե հայրդ ու մայրդ... յեթե հարուստ են.

«Սուտ մի՛ խոսիր... յեթե շահ չունիս.

«Թող մի՛ տար կիրքերդ գերի ըլլան անձիդ.

«Դրացիներդ (դրացիութիւններդ—չ.) անձիդ պես սիրե»:

Մեռյալներուն գալով՝ անոնց հետ ա'լ ավելի քաղցրութեամբ կը վարվի: Այնպիսի արտառուշ դամբանականներ կարձակեր, այնպիսի պերճախոսութեամբ կը գովեր արքայութիւնն, վոր ներկա գտնվողները մեռնելու փափագ կզգային: Չմոռնանք սակայն ըսել, թե յերբեմն ալ մեռյալն արքայութենէն ավելի կը գովեր, վորով ննջեցյալն նախապատիվ կը սեպեր դագաղին մեջ մնալ, քան թե արքայութեան մեջ: Ազգային հիվանդանոցին մոմերուն պես կարգերու կը բաժնվեյին յուր դամբանականները. մեկ վոսկի տվող մեռյալն բարեսիրտ կըլլար. յերկու դրկողը բարեսիրտ և քիչ մ'ալ ազգասեր կը հուշակվեր. յերեք վոսկի նվիրողը ազնիւ սրտով և վսեմ զգացումներով կզարդարվեր. չորս համրողը հանրածանոթ ազգասեր կ'ծանուցվեր. հինգ տվողն կենդանութեանը ժամանակ այնքան գաղտնի վողորմութիւնն տված կըլլար աղքատներուն, վոր մարդ տեսած չեր ըլլար, հայրենյաց բարերար կը հորջորջվեր, և ասանկներուն դագաղը ութը հոգի կը կրեր, վորովհետև չորս հոգի բավական չեյին կրել այնչափ գովեստներով ծանրաբեռնյալ ննջեցյալն: Դագաղն ալ յերբեմն զգացման տեր և ազգասեր կըլլար,

յեթե զայն շինող ատաղձագործը գերապատիվին մեծիտե մը զրկեր: Իսկ անոնք, վոր ժամանակ չունեյին փրկանք վճարել դամբանախոսին, դամբանական լսելու իրավունքե կը զրկվեյին, իրենց վերապահելով սակայն մեռնելու իրավունքը:

Խորեն յեպիսկոպոս յուր պաշտոնակիցներուն պես վարվելով՝ լուելայն սա սկզբունքը կը քարոզեր, թե չար յեղեք վորչափ կուղեք, բայց հարուստ յեղեք վորչափ կընաք: Ժողովուրդը, վոր շատ անգամ ազգաւեր, վորդո-ւնած, բարեսիրտ ածականներուն տրվելը կը լսեր այնպիսի մարդերու, վորոնք իրենց կենդանութեանը ժամանակ ազգը մատնած են իրենց շահուն համար, կամ յեկեղեց-վուն զանձանակեն ստակ գողցած են, ինքն իրեն կըսեր՝ «խորանին վրա, բազմութեան մեջ այսչափ սուտ ինչպե՞ս կարելի յե ըսել առանց կարմրելու»:

Խորեն յեպիսկոպոս միջին հասակով, բարեձև կազմով գեղեցիկ մարդ մե: Յերբ փողոցն յեղնե, ընդհանրապես այն դեմքը կունենա, յերբ բազմութեան մեջ մեկն յուր սիրունիին զաղտնի նշան ընելեն յետքը ուրիշ մը զայն տեսնե և իրեն ըսե. «ըրածիդ հավնեցա՞ր»:

#### ՏԻԳՐԱՆ ՅՈՒՍՈՒՅՅԱՆ.

Պատմագիրները համաձայն չեն Տիգրան Յուսուֆյանի ծծնդյան թվականին վրա: 1850 թվականին ծնունդ կը տան անոր այն պատմագիրներն, վոր ամուսնացնելու աղջիկ ունին. ուրիշներն, վոր անոր նախագահութեանը տակ կորուսեր են իրենց դատը, 1820-ին կատեղծեն զայն: Իսկ մենք, վոր հաճույք մը չենք զգար կիններու մեջ տարիքի խնդիր հուղելով, կըսենք, թե այս յերեսփո-խանը Միջագյուղ ծնած ե 1835-ին, 1854-ին և 1875-ին: 1835-ին՝ յեթե դեմքին նայիս, 1854-ին՝ յեթե պարա-

հանդեսի մը մեջ գտնվի. իսկ 1875-ին՝ յեթե հասակին նայիս:

Մանկութեան որերուն մեջ հանգարտ ու հեզաբարո ըլլալով՝ բնավ պատճառ չեր տար ստնտուին, վոր զինքը կամթոն: Գիշերներն այնպես խոր քուն կը քաշեր, ինչ-պես վոր կը քաշե, յերբ իրեն յերթաս և բանաս իրեն այնպիսի խոսակցութեան մը, վոր բնավ վերաբերութեան չունի դատի\*) հետ: Չմեռվան այն յերկար գիշերներուն մեջ անգամ մը միայն կարթննար և ան ալ վոչ թե լալու կամ կաթ ուտելու համար, այլ յուր թաթիկներով ստըն-տուին ծիծերը բռնելով քնանալու համար: Ամեն յերե-խա, ինչպես հայտնի յե, ունի այս սովորութեանը, սա-կայն կերևի, թե այս յերեխան բավական ատեն հետևած ե այս սովորութեան, վասնզի, կըսեն վոմանք, չորս տարեկան յեղած ատեն տան սպասուհիները Տիգրանեն կը զանգատին յեղեր:

Տղայական խաղերու բնավ չեր մասնակցեր. խելքն ու միտքը պարզաբաշխութեան հանդեսին վրա յեր: Ամեն կիրակի իրեն հասակակից աղջիկներ ու մանչեր տուն հրավիրելով՝ աթոռներու վրա կը բազմեցուներ, ինքն ալ սեղանի մը վրա կեղնե... ճերմակ ձեռնոցներով և կարճ, բայց ազգու ատենաբանութեամբ աղջիկներուն յերեսը կը նայեր... դաստիարակութեան ոգուտներն անոնց զգալ տալու համար:

Ամիրայութեան\*\*) մեծ փափագ ուներ. յուր կարճ, բայց ազգու հասակով ամիրայութեան բարձրանալ կու-

\*) Յուսուֆյանը դատավոր եր:

\*\*) Ամիրա կոչվում էյին թյուրքիայում այն հարուստ հա-յերը, վոր կառավարիչ փաշաների սեղանավոր (սառաֆ) ու ծախ-սարար էյին: Վայելելով բարձրաստիճան փաշաների և պաշտոն-յաների հովանավորութեանը՝ նրանք իրենց ձեռքն էյին վերցրել ազգի գործերը և վարում էյին իրենց ցանկութեան համաձայն:

գեր, վասնզի ամեն բարորություն հոն կը փնտռեր. ուստի նախատինք կը համարեր տեսություն ընել այն ամեն մարդերու հետ, վոր ամիրայական արզանդե մը ծնած չէին: Որ մը նպարավաճառի մը ղրկվեցավ, վոր քիչ մը պանիր առնե, բայց ինքն յերբ տեսավ, վոր նպարավաճառն ամիրա չեր, առանց պանիր առնելու յետ դարձավ:

Յերբ յոթը տարեկան յեղավ, թաղին վարժարանը ղրվեցավ, վոր ուսում առնե: Այն ատենները վարժարաններու մեջ ամեն բան կը գտնվեր, բացի ուսումն. վորով Տիգրանիկն ալ ուսումնն դատ ուրիշ ինչ վոր գտավ, առավ թաղային վարժատունն:

1850-ին Բարիզ գնաց և վաճառականության դպրոցը մտավ հոն: Մեծ հաջողականություն ցույց տվավ այն ուսման, զոր մենք վաճառականություն կանվանենք և վորուն վոմանք խաբեյություն անունը կուտան: Քիչ ատենի մեջ կատարյալ սորվեցավ մարդ խաբելու սկզբունքներն, զոր պիտի գործադրեր վաճառականության մեջ: Սակայն բախտը, վոր յեթե չժպտիր ապուշներու, յերբեմն անոնց պաշտպան կը հանդիսանա, ըսավ Տիգրանին. «Պարո՞ն, յեթե զքեզ վաճառական ընեմ, մահկանացուներուն գլխուն փորձանք մ'ալ պիտի ավելցնեմ: Արդեն վաճառականները պատժել կուզեյի: Ուրախ եմ այսոր զքեզ գտնելուս վրա. գնա ուրեմն դատավոր անունով պատիժ յեղիր վաճառականներուն վրա»:

Բախտին պատգամը կատարվեցավ: Յուսուֆյան առևտրական ժողովներեն մեկուն նախ անգամ և հետո ամբողջությունն (նախագահ) յեղավ:

Շատերը, վոր մտտեն կճանաչեն Յուսուֆյան եֆենտին, կըսեն, թե արդարության ներկայացուցիչն է ան և թե արդարության պես կշիռ մը ունի ձեռքը. սակայն պնդողներ ալ կը գտնվին, թե այդ կշիռը ծախու առ-

նված է նպարավաճառե մը, վոր պակաս կշռելուն համար ամեն որ տուգանք կը վճարեր.

Տիգրան եֆենտին այնքան կը փափազի ազգիս ծառայություն ընել, վոր հարյուր հոգվո գլուխ հանելիք գործը միայն կուզե կատարել: Սուտ չեմ խոսիր: Գնա որ մը իրեն ըսե՛.

— Եֆենտի՛, թաղիս մեջ կուզենք բարեգործական ընկերություն մը կազմել:

— Վսեմ գաղափար:

— Կը փափազինք, վոր հրամանքնիդ ալ ատենապետ (նախագահ) ըլլաք:

— Սիրով կընդունիմ:

Այս պատասխանը առնելեդ յետքը դուրս յելիր սենյակեն և դռան քովը կեցիր:

Ահա ուրիշ մը կը մտնե.

— Եֆենտի, վորոշեցինք վարժարաններու նպաստելու համար ընկերություն մը հաստատել:

— Շատ ազգոգուտ ձեռնարկություն:

— Արդյոք կընդունեյի՞ք...

— Ատենապետությո՞ւնը... սիրով կըն...

— Կընդունեյի՞ք տասը բաժին...

— Ընկալազիրն (ստացական) ամսե մը ղրկե:

Սենյակեն դուրս յելած ատենը ասոր ձեռքեն քաշե և քովդ կայնեցո՛ւր:

Յերրորդ մը կը մտնե:

— Բարև՛, եֆենտի:

— Աստծու բարին:

— Մսավաճառի խանութ մը բանալ կուզենք ընկերությամբ:

— Ազգային դատարակությունը զարգացնելու ամեն կարճ ճամբան...

— Ի՞նչ կըսեք:

— Շատ աղեկ խորհեր եք. առողջ մարմին, առողջ միտք,—կըսե առածը: հետևապես մարդս վորչափ միս ուտե, այնչափ առողջ միտք կունենա. ուստի վորչափ շատնա մսավաճառությունն, այնչափ կը շատնա բանաստեղծությունը, գրականությունը և այլն:

— Շնորհակալ ենք. ի՞նչ պետք է այս գործը գլուխ հանելու համար:

— Ատենապետ մը, և ատենապետն ալ յես կըլլամ:

Դուան քովն ես կարծեմ. ասոր ալ ոճիքեն քաշե և չորրորդին սպասե, վոր ահա կուգա.

— Բարև, եֆենտի:

— Աստու բարին:

— Քանի մը յերիտասարդներ մեկտեղ յեկած ընկերություն մը հաստատած են. ասոնք վոչ իրենց ըրածը գիտեն և վոչ ալ ընելիքը. այսպիսի ընկերություններն ազգին չարիք հասցնելեն զատ ուրիշ բանի մը չեն ծառայիր. ուստի մենք վորոշեցինք ընկերություն մը կազմել... այդ ընկերությունը կործանելու համար:

— Բուն հայությունն ալ աս է:

— Մեզի կողմէ՞ք այս պարագային մեջ:

— Ինչո՞ւ չե. քանի վոր կըսեք, թե ազգին վնասակար է, պետք է վոր կործանվի: Յես անոր ատենապետը կանչել կուտամ և կը խոսիմ:

— Ատենապետը կանչել կուտա՞ք...

— Այո՛ պիտի վախնամ իրմե:

— Բայց այդ ընկերության ատենապետը... գուք եք:

— Յե՞ս եմ... ի՞նչ փույթ թե յես եմ, քանի վոր նպատակին չի ծառայեր, կըսեք, պետք է կործանել:

— Շնորհակալ եմ:

— Մեր պարտքն է կործանել բոլոր վնասակար ընկերությունները, ով վոր ալ ըլլան անոնց ատենապետները:

Կը կարծեք, թե կը կործանե՞ք. քալ լիցի.—կը կարծեք, թե կը շինե՞ք, յերիցս քալ լիցի. այնչափ ընկերություններու անդամ ե, վոր ժամանակ չունի վոչ կործանելու, վոչ ալ շինելու:

1870-ին յերեսփոխան ընտրվելով՝ հրավիրվեցավ յերեսփոխանական ժողովո մեջ աթոռի վրա բազմելու: Այս ժողովո մեջ բավականեն ավելի գործեց, վորովհետև հոն գործելը լեզվով եր և վոչ թե ձեռքով: Յուր ատենաբանություններն յերբեմն տարապայման կերկընային և ունկնդիր ժողովրդյան գլխուն ցավ կը պատճառեյին. թեպետև շատերը կը հարգեն Յուսուֆյան եֆենտիին ատենախոսություններն իբրև... քրտնեցուցիչ դեղ. և այս է պատճառ, վոր հարբուխ յեղողները փոխանակ թեյ խմելով կամ վոտքերը տաք ջուրի մեջ դնելով քրտնել աշխատելու, Յուսուֆյան եֆենտի յերկարածիք ատենախոսությունները մտիկ կընեյին և քրտնելով բժշկություն կը գտնեյին:

Վոչ միայն յերեսփոխանական ժողովո մեջ, այլ վարժարաններու և թատրոններու մեջ ալ ըրած է ատենաբանություններ, վորոնց թիվն այսոր վեց հազար ութը հարյուր ինսուտը վեցի կը հասնի:

Ամեն պարգևաբաշխության հանդեսներն ինք կբանա. յեթե յերկու կամ յերեք հանդես մեկ որվան հանդիպին յերկուքին ալ կամ յերեքին ալ կը հասնի: Յուր համոզողական խոսքերուն շնորհիվն է, վոր այս որ Միջագյուղի թարգմանչաց վարժարանը գոցվելու վիճակի մեջ ինկած է:

Իբրև մատենագիր շատ ծառայած է ազգին չհրատարակելով յուր յերկասիրություններն... յեթե Բերայի հրդեհին մեջ հրո ճարակ յեղած չեն:

Յուր սկզբունքներն են.

«Շատ խոսե, քիչ մտիկ ըրե.

«Յեթե քու չուգած մեկուն հետ տեսնվիլ չես ուզեր,

բացե ի բաց մի մերժեր զինքն, այլ այնպիսի ժամադրութեան տեղ մը ընտրե, ուր չկարենա գալ:

«Սոստանալը կատարել է»:

Յուսուֆյան եֆենտին կարճ հասակով, բարձր գաղափարով վայելուչ յերիտասարդ մե: Ձմեռը այնչափ մեծ թիկնոց կը հագնի, վոր մեջը կը կորսվի. այնպես վոր զինքը տեսնողը չըսեր թե՛ «վորքան մեծ թիկնոց հագել է», այլ կըսե. «Յեղբայր, կարծես թե սա թիկնոցին մեջ բան մը կա»: Յուր սովորական դեմքը կը հիշեցունե մեզ այն մարդուն դեմքը, վոր յերեսուն քայլ հեռավորութեամբ թուչունի մը ուշադրութեամբ նշան կառնե և յերբ հրացանը կը պարպե, կը տեսնե, վոր թուչունը տեղեն անգամ յերերած չե:

#### ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԻՓԵՔՃՅԱՆ

Այն որն, ուր առաջադրեցի այս դաստիարակին կյանքը գրելու, ինքզինքիս հարցուցի:

— Իրա՞վ է, թե անպետ բան մը կամ եակ մը չե ստեղծված աշխարհիս վրա:

Յեթե իրավ է, պատասխանեցի յես ինձի, աս մարդն ի՞նչ միտք ունի աշխարհիս վրա:

Քանի մը վայրկյան ճակատս շփելեն յետքը համոզվեցա, վոր արդարև անպետ բան մը կամ եակ չե ստեղծված աշխարհիս վրա. յուրաքանչյուրն յուր գոյութեան պատճառն ունի: Որինակի համար Սասգյուղի (Պոլսո թաղերից մեկն է) շոգենավերն ստեղծված են մահկանացուներս համբերութեան վարժեցնելու համար: Թղթադրամն ու պղինձն հանված է հասկցունելու համար մեզի, թե ինչ վոր սկիզբ ունի, վերջ ալ ունի: Լուսինն ստեղծված է, վոր Բերայի (Պոլսո թաղ) կազերն յերբ մարեն, փողոցները լուսավորե, վորպեսզի գողերը մութին մեջ սխալ տուն չմտնեն: Դասատուներ ստեղծված է բժիշկներու սորվեցունելու

համար, թե մարդս քանի ժամ կընա անոթութեան դիմանալ:

Այս ամենն աղեկ, կըսեք, բայց Իփեքճյանն ինչո՞ւ համար ստեղծված է: Անշուշտ շրջանակի մը մեջ անցունելով պատեն կախելու համար չե: Ինչո՞ւ ուրեմն յեկած է աշխարհ: Մի՛ բարկանաք, բարեկամ, աշխարհ ըսածդ վարժարան չե, վոր մեր գործին յես գար ըսենք ու ճամբենք: Համբերեցեք, հարկավ նպատակի համար յեկած պիտի ըլլա: Ի՞նչ է նպատակը: Քանի մը վայրկյան ճակատ շփելը բավական է զմեզ համոզելու համար, վոր Իփեքճյան աշխարհ գալով ուզած է հասկցունել զմեզ, վոր դաստիարակութեան մասին մենք շատ յես մնացած ենք: Յեթե այդպես չըլլար, թող չեյինք տար անշուշտ, վոր դաստիարակ մը աշխարհիս չորս կողմը պտրտիլ ստիպվի ապրելու համար: Չափազանցութուն չե ըսածս, մտիկ ըրեք:

Առանց ուրիշի խորհուրդ հարցնելու այս մարդն 1843-ին յելավ աշխարհ յեկավ: Բարի յեկավ, հազար բարի: Սակայն մարդս քաղաք մը, գեղ մը յերթալ ուզած ժամանակն անգամ նախ ծանոթութուն կը հավաքե և վերջը կերթա, ուր մնաց աշխարհն, վորու վրայոք հազիվ չորս հոգի կը գտնվի նպատակովոր տեղեկութուն տվող: Իփեքճյան յեթե այն ժամանակի դաստիարակներեն խորհուրդ հարցներ, շատ հավանական եր, վոր աշխարհ գալու նպատակեն հրաժարեր:

Այս չըրավ և չընելեն յետքը հանձնարարական թուղթ մ'ալ չառավ: Վա՛յ ան պարկեշտ ուսումնականներուն, գործունյաներուն և աշխատասերներուն, վոր հանձնարարող մը չունին, սողալով պիտի սողան գետնի վրա... յերանի այն տգետներուն, վոր հանձնարարողներ ունին, կամ յերևելի շենքերու վարչութեան անորեններ կըլլան, կամ առատ թողալներ կընդունին ու խելացիները ծաղրելով պատվական կյանք կանցունեն:

1852-ի ատենները Միմֆերոպոլ գնաց և հոն վարժարան մտնելով փոխանակ ուսանելու՝ ուսուցանելու արհեստը սորվիլ կուզեր: Համոզեցին զինքն, վոր առանց ուսանելու ուսուցանել անկարելի յեր և ասոր վրա սկսավ յուր դասերը պատրաստել և ընկերները գերազանցել:

1859-ին վարժարանեն յելավ և Թեոդոսիա գնալով ուզեց դասատուությամբ ապրիլ: Դասատուությամբ ապրիլ... հրաշքի դարերն անցած են... դասատուությամբ մեռնիլ, այս է իրականությունը: Քաղաքագետներն մեծ գործ մը բրած կըլլան, յեթե կախովելու անձերն Թյուրքիա զրկեն դասատուություն ընելու:

1867-ին Կ. Պոլիս յեկավ: Դասատուի մը աշխարհ գալն հանցանք մ'է արդեն, իսկ Պոլիս գալն ինչպես ըսինք, անանկ ծանր հանցանք մ'է: վոր բնավ ներելի չէ: Իփեքճյան այս մահացու մեղքն ալ գործեց և Յենի Գափուի (Պոլսո թաղ) վարժարանը մտավ տեսչության պաշտոնով: Այս անձն պատիկին վրա պատիկ գաղափար ունի կամ, լավ ևս բնավ գաղափար չունի. կը փափագի, վոր ամեն բան մեծ, փառավոր և կատարյալ ըլլա: Յեթե կոշկակար մը յեղած ըլլար, նավակի մեծությամբ կոշիկներ պիտի կարեր, թեպետ և պոլսեցիներուն մեծ ծառայություն մը պիտի ըներ, վասնզի յերբեմն փողոցներե անցնելու համար նավակի պետքը զգալի կըլլա: Ամիսը տասնուհինգ վոսկի յեկամուտ ունեցող վարժարանի մը տնորեն կարգե Իփեքճյան եֆենտին և աղաչե իրեն, վոր՝ ծրագիր մը պատրաստե: Հետևյալ ուրը ծրագիր մը կը հանե ծոցեն և կսկսի կարգալ:

ա. Նկատելով վոր դպրոցի շենքն ավելի ախոռի ձևով շինված է քան թե դաստիարակության շենքի մը ձևով, կը խնդրեմ, վոր նախ այս դպրոցը փլցունեք և նորեն շինեք այն ձևով, վորուն ուրինակը Գերմանիայեն բերել տված եմ: Այս շենքին մեջ անկարելի յե տղա (յերեխա) դաստիարակելը.

բ. Ճեմիշները (արտաքնոց) վերցունելու յե դպրոցին քովեն և քաղաքեն դուրս տեղ մը դնելու յե.

գ. Նկատելով վոր կլիման վնասակար է, կը խնդրեմ, վոր հոգաբարձությունդ արժանը տնորինե քաղաքիս կլիման փոխելու համար...

Այս տեսակ ծրագիրներով կը փափագի Գերմանիայի վարժարաններու հավասար ընել այն վարժարանն, վոր յուր տնորինությանը տակ առած է: Հայտնի յե, թե այսպիսի ծրագիրներն վորչափ ընդունելություն կը գտնեն անանկ ժողովրդե մը, վոր տնորենի տված ամսականը ծովը նետված ստակ (փող) կը համարե:

Իփեքճյան չուզեր ծրագրին մեջ քյուռն վերջավորած խել մը ուսումներ և գիտություններ շարելեն յետքը գանոնք աշակերտներուն չսորվեցունել և, հետևապես, անոնց ծնողքը խաբած ըլլալ: Նույն իսկ պարզեաբաշխության որերն ալ, վորք ծնողքներ խաբելու հատուկ որեր են, բնավ սուտ չխոսիր. հայտնապես կըսե, թե Թորոսը տկար է, Կիրակոսը ծուլ է. մինչդեռ ժողովրդյան հաճելի ըլլալու համար պետք եր ըսել, վոր փառք աստծու, վարժարանիս բոլոր աշակերտները հառաջագեմ են և կը հուսամ, վոր գալ տարի փիլիսոփաներու հորդ առատություն մը պիտի տեսնենք: Վարժարանի տնորենի մը համար քիչ մը ստախոսություն և քիչ մ'ալ շողոքորթություն անհրաժեշտ պետք է. և այն տնորենն, վոր այս յերկու առաքինություններե զուրկ է, անպատճառ ուր մը հեռանալ պիտի ստիպվի այդ ասպարեղեն:

Ասկից գատ Իփեքճյան հոգաբարձու եֆենտիններու հետ վարվելու յեղանակն ալ չգիտեր: Հոգաբարձու մը կուզեր, վոր տնորենն յուր առջև բարե մը բռնե, սիկարայիս կրակ բերե. յեթե փողոցի մեջ հանդիպի հոգաբարձուի մը, վոր միս ի ձեռին կերթա, միս ինքն առնե:

1001  
19364

լու և տանելու յե: Այսպես չվարվեցա՞վ... ալ ականջները հոգաբարձուներուն բերանին մոտեցունելու յե:

— Ի՞նչ ըսել ե, եֆենտիմ, ան տիրացուին խո՞սքը պիտի ըլլա:

— Իրավունք ունիք, առջի որը դպրոց մտա, տեղեն չերերաց, կարծես ա՛ն մեզի ամսական կուտա:

— Շատ ճշմարիտը խոսեցաք, ազգին ստակովը կապ-ըին... և հոգաբարձուներուն հրամայել կուզեն:

— Վճնտելու յե այդ մարդը, վճնտելու յե:

— Այո՛, այո՛... ծո տնտես, գնա պատվելիին (ուսուցչին) ըսե, վոր մեյ մ՛ալ դպրոց վտաք չկոխե:

Հարկ չմնար ալ յերկար բարակ բացատրելու, թե Իփեքճյան ինչու յերկար չկըցավ մնալ Պոլսո թաղային վարժարաններուն մեջ:

#### ԿԱՐԱՊԵՏ ՊԵՅ ՅԵՐԱՄՅԱՆ

Կարապետ պեյ Յերամյան ծնած ե 1830-ին: Կազմով բարեձև ե, սև աչերով և սև ընքվիներով մարդ մ՛ե:

Մզկիթ մը շինել տված ե:

#### Հ Ո Ս Ո Ս Ի Զ Ե Ռ Ն Ա Տ Ե Տ Ր Ը

«Վորոշեցի ձեռատետր մ՛ուսենալ, անոր մեջ նշանակել որվան դեպքեր և յերբեմն այս դեպքերու առթիվ մահկանացուներու թերություններու վրա ծիծաղիլ».— ասում ե Պարոնյանն իր այս գրվածքի առաջաբանում: Այնպես վոր դա մի տեսակ որագիր-հիշատակարանի ձևով Ֆելիետոնների ժողովածու յե, վոր սկսում ե 1880 թվի հունիս մեկից և հասնում նույն թվի նոյեմբերի 30-ը:

«Ձեռատետրի մեջ» Պարոնյանը շոշափում ե գանազան և բազմատեսակ հարցեր—քաղաքական, հասարակական, կենցաղային, գրական, թատրոնական և այլն: Յեվ ամեն որ ել նա կարողանում ե բավական հարուստ նյութ գտնել իր յերգիծական գրչի համար:

«Հոսոսի ձեռատետրից» տալիս ենք մի շարք նյութեր՝ կյանքի այս կամ այն կողմի վերաբերյալ:

Հ. Հով.

## ՀՈՍՈՍԻ ԶԵՌԱՏԵՏՐԸ

### 1. ԹՅՈՒՐԳԻԱՆ ՅԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեսպանախորհուրդն\*) յուր վորոշումն տվավ Հունաստանի խնդրույն մասին: Վոչ միայն վորոշում տվավ, այլ Յանյան ալ տվավ Հունաստանի: Հիմա Հունաստանի կմնա առնել Յանյան, վոր իրեն տրված է:

Յեթե թյուրք կառավարությունն հակառակի այս վորոշման՝ վեց տերությունները պիտի ոգնե՞ն Հունաստանի: Այո... ուրիշ դեսպանախորհուրդով մը:

Սուրբիո կուսակալ Միտհատ փաշա հիշյալ նահանգին համար բարենորոգմանց ծրագիր ղրկած է կայս. կառավարության:

Ամեն կողմե ծրագիր... Արեղին փաշան վոր կողմ վոր դառնա, յուր դեմը ծրագիր մը կելնե:

— Ա՛ռ սա ծրագիրն, աղեկ է:

— Ա՛ռ սա ծրագիրն, շատ լավ է:

— Տուր սա Յանյան, վոր քեզի շատ աղեկություններ պիտի բերե:

— Տո՛ւր սա Տուլչինեոն, վոր խալըսիս (աղատվես):

\*) 1878 թ. Բերլինի դեսպանախորհրդում վեց «մեծ» պետություններն իրենց վրա առան Թյուրքիայում բարենորոգումներ մտցնելու և վերջինիս ու բալկանյան պետությունների միջև յեղած առկախ խնդիրները հարթելու պարտականությունը: Ավելի ճիշտ ասած՝ ոգտվելով Թյուրքիայի դժվար կացությունից սկսեցին միջամտել նրա ներքին գործերին՝ իրենց շահերն առաջ տանելու նպատակով: Այդ վեց պետությունների Պոլսո դեսպանների խորհրդի մասին է խոսում Պարոնյանը: Զ. Հով.

Մեզի ամեն կողմե խրատ, հորդոր և ծանուցագիր կղրկեն, մինչդեռ մենք դրամի միայն պետք ունինք:

Առատ-առատ նորակեր, բայց մոռցիխայիև ձայնը չլսվեցավ դեռ... Դեսպաններն ամեն ուր նորակեր կխմբագրեն և Բ. Դուան (Բարձրագույն Դուռ—սուլթանի պալատ) կղրկեն: Բ. պատուհանեն ալ այդ նորակերուն նորակերով կպատասխանվի:

Բ. Դուան այսոր դեսպաններուն նորա մ'ալ ղրկեց, վորով կծանուցանե, թե անհնարին է իրեն Տուլչինեոն Բարադաղի հանձնել:

Վեց պետությունները կստիպեն զմեզ, վոր բոլոր սահմանակից տերություններուն կամ իշխանություններուն մեյ մեկ կտոր յերկիր տանք: «Տվեք այս յերկիրներն, վոր կըսեն, Թյուրքիո ամբողջությունը պահպանենք... ձեզի համար մեծ բարիք է, վոր այդ յերկիրները ձեռքե հանեք... Բերլինի դաշնադրության առջև մոմ վառելու յեք, վոր ձեր իրավունքներն հզորապես պաշտպանեց:

Կեցցեն պաշտպանք Թյուրքիո...

Մեր բարեխնամ կառավարությունն ամեն ուր կաղաչե վեց տերություններեն, վոր Բերլինի դեսպանախորհրդո մեջ վորոշված հելլենական սահմանագիծը քիչ մը բարեփոխեն:

— Կաղաչեմ, պարոն Կոչեն (Անգլիայի ներկայացուցիչը), կըսե վեհափառ սուլթանը, սա սահմանագիծը քիչ մը փոխեցեք:

— Անկարելի յե, վեհափառ տեր:

— Սահմանագիծ մը փոխելը այսչափ դժվա՞ր գործ է: յես ուր յերկու նախարար կփոխեմ:

— Դուք կարող եք, վեհափառ տեր:

— Փոխե, փոխե սա սահմանագիծն. յես ալ կերակուրեն յետքը նախարարությունը կփոխեմ:

— Ձե՛մ կարող, վեհափառ տեր:

— Քանի մը պատվանշան կուտամ քեզի:

— Կարելի չե՛: Վեհափառ տեր, դուք գետեք, վոր թագուհւոյն (անգլիական) կառավարութիւնն վորքան կսիրե ձեր յերկիրը և վորքան կաշխատի անոր բարվոյն համար: Ուստի շնորհ ըրեք անոր խորհուրդները մտիկ ընելու: Վեհափառ տեր, Յանյան տվեք Հունաստանի, Տուլչինեոն Քարադաղի թողեք, թող տվեք Նովի-Բագարն Ավստրիան գրավե: Այն ատեն գանձը մեր տեսչութիւնն տակը կառնենք, բայց ձայն հանելու չե, յերբ Արեւելյան Ռումելին Բուլղարիո հետ միանա: Յերբ վոր գործերն այսպես կարգադրվին, ներքին գործոց նախարարութիւնը մենք կվարենք, արտաքին գործոց նախարարութիւնն ալ Ռումելիո կհանձնենք և կտեսնեք, թե յերկիրն վորչափ կբարենորոգվի: Ձեր վեհափառութիւնն սիրան ալ հանգիստ կլինի և փորձանքներե խալսելու համար Դարդանելը մեզի կուտաք, Սև Ծովու նեղուցն ալ վարպետութիւնամբ մը Ռումելիո գլուխը կիւթտեք, և հանդարտ սրտով, մաքուր խղճով ձեր վեհափառութիւնը ժամանակ կանցունե իր կախարդներովը: Այդ յերկու նեղուցներն ձեր գլխուն փորձանք են, ջանացեք ուրեմն այդ փորձանքներն հեռացնելու... Ինչո՞ւ կվախնաք, վեհափառ տեր, տերութիւններն վոչ ապաքեն ձեր ամբողջութիւնն ապահոված են Բերլինի դաշնագրով:

Ասոնք են գրեթե տերութիւններուն առաջարկութիւններն, զորս յեթե չընդունինք, կըսեն, մեր վրա մեծ պատասխանատւութիւն պիտի հրավիրենք յեղեր, իսկ յեթե ընդունինք, Ռումանյան կառավարութիւնն համար նոր դարագլուխ մը պիտի բացվի յեղեր:

Քեղեցիկ առաջարկութիւններ, գեղեցկագոյն խրատներ. մարմինը քառասուն կտորի բաժանել և անոր յերեսուն և ութը կտորը առնելով Ռումանյան կառավարութիւնն <sup>2/3</sup>-ի վերածել և անոր ըսել.

— Ալ անհոգ յեղիր, քու ամբողջութիւնդ յերաշխս վորված ե, Յեվրոպայն մի՛ գատվիր, վոր փրկութիւն գտնես:

Ո՛վ ամբողջութիւն:

Ո՛վ փրկութիւն:

## 2. ՍՈՒՂԹԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Անատոլիայի սովետոց համար մեծ վիճակահանութիւն մը պիտի լինի... գալ տարի:

Հիշյալ վիճակահանութիւնն գործադիր ժողովն շրջաբերական պիտի ղրկե գավառները՝ հորդորելու համար սովյալները, վոր համբերեն և անոթութենե չմեռնին, մինչև վոր իրենց հաց ղրկվի...

Փառք տալու յենք, վոր թյուրք բարեխնամ կառավարութիւնը շատ տարիներե հետե նախատեսած լինելով այս սովն, ազդու միջոցներ ձեռք առած եր յուր հավատարիմ հպատակներն անոթութիւնն վարժեցնելու:

Այսոր տասը գողութիւնն տեղի ունեցավ և մեկ ձերբակալութիւնն տեղի չունեցավ. մինչդեռ ուրիշ որեր քառասուն ձերբակալութիւնն կլինի և մեկ գողութիւնն չլինիր:

Ընդհանրապես անոնք միայն կպատժվին, վոր գողութիւնն չեն ըներ, վասնզի մայրաքաղաքիս մեջ մեծամասնութիւնը գողերու քովն ե, և սահմանադրական կառավարութիւններն, ինչպես հայտնի յե, մեծամասնութիւնամբ կորոշեն ամեն բան:

Ապարտայի որենագիրն այն գողերը կպատժեր, վորք վարպետութիւնամբ չեյին կատարեր իրենց արհեստը: Այժմ

նույն որենքը մայրաքաղաքիս մեջ գործադրվելու վրա յե...  
Յերանի անոնց, վոր բան չունին գողանալ տալու:

Ձեմ հիշեր, Հայաստանի վոր կողմը գայմագամ մը  
յուր պաշտոնատեղին զնացած ժամանակը ավագակներե  
կողոպտվեր ե:

Ավագակներն իրենց պաշտոնակիցը մերկացնելով  
ըսած են անոր.

— Մեզի դեմ միշտ գանգատներ կգրվին Պոլիս, իսկ  
քեզի համար շնորհակալության նամակներ, մինչդեռ դու  
և մենք միևնույն արհեստը կգործենք տարբեր յեղանակ-  
ներով:

Գայմագամը խոսք տալով վոր անոնց ալ գայրագա-  
մուրթուն մը տրվելուն համար պիտի աշխատի, ոճիքը  
կազատե:

Թյուրք լրագրներն պարծանոք կհրատարակեն, թե  
բայրամի առթիվ պաշտոնյաներուն ամսական պիտի տրվի:

Մարդս ինքն իրեն հարցունելու կստիպվի, թե՛ յեթե  
ասոնք բայրամ չունենային՝ պաշտոնյաները բնավ ամսա-  
կան չպիտի՞ առնեյին:

Յավալին այն ե, վոր տարին մեկ յերկու բայրամ  
ունին. մյուս ամիսներն ի՞նչ կուտեն պաշտոնյաները:

— Կաշառք...

### 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ.

Դեսպաններն այսոր նոր ժողովք ըրին հայկական  
խնդրույն համար: Անգղիո և Ֆրանսիայի դեսպանները  
մեյ մեկ ծրագիր պիտի պատրաստեն: Ժողովրդյան մեջ

վոմանք կաշնդեն, թե Անգղիո դեսպանին ծրագիրը պիտի  
ընդունվի. յես կաշնդեմ, թե վոչ մին պիտի ընդունվի:

Հայկական խնդրույն վրայոք առնված հաջող լուրե-  
րուն վրա մայրաքաղաքիս բոլոր ազգայինները կպատ-  
րաստվին Հայաստանի կուսակալ ըլլալու:

Ամբակում աղան, վորուն ճակատեն վաթսուն չորս  
ձմեռներ անցած են, քանի մը որե ի վեր զինվորական  
վարժություններու կպարապի այնպիսի փափագով և յե-  
ռանդով, վոր վոչ սենյակ մտնողները կտեսնե, վոչ ալ  
անոնց խոսքերուն կպատասխանե:

Կինը կարծելով թե ամուսինն խելագարված ե, բժիշկը  
կանչել կուտա:

Յերկու ժամեն յետքը կուգա բժիշկն, վոր ըստ բըժշ-  
կական սովորության կհարցունե. «ո՞վ ե հիվանդը»:

Գիտեք արդեն, վոր Հիպոկրատի սաներն (բժիշկ-  
ները) այն ատեն կճանաչեն հիվանդները, յերբ ասոնք  
մատով ցուցվեն իրենց: Յերկու քաջաուղջ մարդերու քով  
հիվանդ մը դիր և հարցուր բժշկին.

— Ո՞վ ե հիվանդը, տեր բժիշկ:

— Հայտնի յե, վոր այս ե,—պիտի պատասխանե  
քեզ՝ ցույց տալով այն մարդուն, վոր յերկաթի պես քա-  
ջաուղջ ե:

Հիվանդություններն ալ այն ատեն կճանաչեն, յերբ  
հիվանդը մեռնի: Չկա մեռյալ մը, վորուն ինչ հիվանդու-  
թենս մեռած ըլլալն չհասկցվի. ինչպես վոր չկա հիվանդ  
մը, վորուն ինչ հիվանդութենս բռնված ըլլալը հասկցվի...

Մեր խնդիրեն քիչ մը հեռացանք, մոտենանք անոր:  
Բժիշկը կառաջնորդվի Ամբակում աղային սենյակը:

— Բարև, Ամբակում աղա,—կըսե բժիշկը:

— Մեկ, յերկու, յերեք,—կպատասխանե Ամբակում

աղան, վոր ավելի կոթ մը բռնած՝ վարժութիւն կընէ:

— Ինչպե՞ս եք, Ամբակո՛ւմ աղա:

— Մի ձախ, մի աջ...

— Ձեզի խոսք մը ունեյի ըս...

— Հապ ոն հառաջ,— կըսէ Ամբակում աղան և այնպիսի արագութեամբ մը կանցնի բժշկին քովն, վոր վերջինս գետին կիյնա:

Բժիշկը վար կերթա և Ամբակում աղային տիկնոջը կըսէ.

— Ամուսնուդ ուղեղը փաստած է:

— Խեղաբարձ է:

— Գրեթէ:

— Ի՞նչ կըսեք, հիմա խելքս կըթուցունեմ...

— Ճա՞րը... կապելու և Փրկիչ (հիվանդանոց-գժանոց) տանելու յե:

— Ըլլալու բան չե... գոնե ազգային յերեսփոխանական ժողովը տանենք...

— Յերեսփոխանական ժողովը հիմարանո՞ց է:

— Ի՞նչ գիտնամ, յերեկ քրոջս տղան կըսեր, վոր ազգային յերեսփոխանական ժողովո մեջ խենդ ու խելառ խոսքեր կընեն: Բայց տեր բժիշկ, իմ ամուսինս խելագարելու պատճառ մը չուներ:

— Բանի մը վրա շատ մտածե՞ց:

— Բնավ յերբեք:

— Մեծ վիշտ մը կըրե՞ց:

— Վո՛չ:

— Խմբագրութիւն կընե՞:

— Ամենեին:

— Չափազանց ուրախութիւն մը զգա՞ց մոտերս:

— Գրեթէ քանի մը ատենե ի վեր միշտ ուրախ եր. ամեն ոք կըսեր. «Հայաստանի կուսակալ պիտի ըլլամ»:

— Խե՛ղճ մարդ:

— Խղճալի՛ր ամուսինս:

Բժիշկը դեղագիր մը կգրէ, այցելութեան վարձը կընդունի և կմեկնի:

Ամբակում աղան վար կուգա և կհրամայէ, վոր սեղանը պատրաստվի:

Ամբակում աղային ուղեղը փաստած չէ. անոր հիվանդութիւնն է կուսակալութեան համար չափազանց սեր:

Կարծեմ ավելորդ կլինի ըսել, թե՛ յեթէ Հայաստանի ինքնորինութիւն տրվի, յուրաքանչյուր գյուղին ութը հարյուր կուսակալ պիտի իյնա. ամենքս ալ կառավարող պիտի լինինք և կառավարելու համար Յեվրոպայեն ժողովուրդներ բերել պիտի ստիպվինք:

— Ժը մանժ, տյու մանժ, իլ մանժ, նու մանժոն, վու մանժե, իլ մանժ\* )...

— Այդ ի՞նչ է, Կարապե՛տ աղա, քառասունեն յետքը նոր բանե՞ր կհանես:

— Ի՞նչ ընեմ, Հակո՛բ աղա, Հայաստանի մեջ բարենորոգումներ պիտի ըլլան յեղեր, թերևս մենք ալ պաշտոն մը ձեռք կանցունենք...

— Ի՞նչ կսերտես:

— Ուտեմ բային ֆրանսերենը կը կարդամ...

— Ֆրանսերենի յե՞րբ սկսար:

— Ժամ մը առաջ:

— Մեկեն ի մեկ այդ բայն ի՞նչպես յեկար հասար:

— Առաջին դասս է այս, Հակո՛բ աղա, ի՞նչ ընեմ, Թ՛յուրքիո մեջ պաշտոն վարողներն ամենեն առաջ այս բայը կսորվին:

\* ) Ֆրանսերեն է, նշանակում է՝ յես ուտում եմ, դու ուտում ես, նա ուտում է, մենք ուտում ենք, դուք ուտում եք, նրանք ուտում են:

Անգղիական լրագիրները կժանուցեն, վոր Տուլչինոյի հանձնումեն յետքը յեթե Անգղիա առանձին մնա, ավելի առաջ չպիտի յերթա:

— Յե՞տ պիտի յերթա:

— Աս ալ չենք հուսար:

Անգղիական լրագիրներուն այս գուշակութուններն տխուր ազդեցութիւն մը ունեցան անոնց վրա, վորք իրենց հույսը միայն Անգղիո վրա դրած էին: Յե՛վ արդարև, Անգղիո ազատական կուսակցութիւնը շատ նպաստավոր կերպով խոսեցավ հայկական խնդրույն համար. նույնիսկ թագուհին յուր խոսած ճառին մեջ հայոց խընդիրն ալ հիշած էր: Սակայն մոռնալու չե, վոր յերբ շահը խոսի, հիշողութիւնը կտկարանա և մարդս չկրնար յուր ըրած խոստումը հիշելու:

#### 4. Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Կ. Յ. Ա. Ն. Բ.

Պատրիարքն այսոր պատարագ ըրավ Ղալաթիա, վորու յեկեղեցւոյն տոնախմբութեան ոըն էր:

Շատ մը գողեր ուխտավորներեն ստակ գողցան:

Գողերեն մին, վոր հայ էր, ձերբակալւեցավ: Քանի մը ազգայիններ հարց ու փորձ ըրին զինքը:

— Ուսկի՞ց առիւր այս յերկու մեջիսիեն:

— Գանձանակեն առի:

— Ինչո՞ւ առիւր:

— Ի՞նչ կըլլա յեղեր առնելով:

— Գողութիւն յեղած կըլլա:

— Յես գող չեմ:

— Ինչո՞ւ առիւր և գրպանդ դրիր:

— Նախորդ թաղական խորհրդո անդամներեն եմ յես:

— Սուտ կխոսիս. դու բնավ թաղական խորհրդո անդամ յեղած չես, ի՞նչ ըսել կուզես:

— Սա ըսել կուզեմ, վոր թաղական խորհրդո անդամ մը կարող է այդպիսի բան մը ընել առանց գող ըսվելու:

Պատասխանը գոհացուցիչ լինելով, մարդուն ճամբա տրվեցավ:

Ստույգ վիճակագրութեան մը նայելով՝ Պոլսո հայերն այսոր ունին յերեք հազար չորս հարյուր գինետուն, յերեք գրավաճառի խանութ, հազար յերկու հարյուր պարի դասատու, յերկու հազար զբոսարան, յերեք թանգարան, չորս հազար ծրար խաղի թուղթ, հինգ լրագիր:

Սամսոնեն կգրեն, թե կին մը ամսույս 15-ին գավակ մը բերած է, վորուն կեսը մարդ և կեսը ձուկ է յեղեր:

— Կեսը կտրելով տապակելու և ուտելու էին...

Այս հրեշը ծնանելեն քանի մը ժամ յետքը մեռած է:

Այս հրեշին ծնելուն վրա չեմ զարմանար, բայց այնչափ վաղ մեռնելուն վրա կխորհիմ:

— Ինչո՞ւ:

Անոր համար, թե՛ ինչպե՞ս կապրի ուրեմն մեր ազգային յերեսփոխանական ժողովն, վորուն մեկ քառորդը մարդ է և յերեք քառորդը թութակ է:

Պ. Նորայր հարուստ ազգայինի մը թերթ մը կղրկե յուր ֆրանսերեն-հայերեն բառարանեն, զոր մաս առ մաս կհրատարակե:

— Սա ի՞նչ է,— կպոռա հարուստ ազգայինը, այս բառարանն ի՞նչ ընեմ յես. ժամանակ է հիմա ատանկ չնչին բաներու համար ստակ տալ. չեմ ուզեր, յետ դարձուցեք և ըսեք իրեն, վոր մեյ մ՛ալ ասանկ բաներ չղրկե ինձի:

Ահա, պարոն գրագիր, քեզի ալ հատկապէս կ'աւա-  
վիրեմ, վոր յեթե իմ բացակայութեանս ինձի համար գիրք  
կամ լրագիր բերելու ըլլան, չընդունես, ապա թե վոչ  
կվորնդեմ գրեց:

Փամ մը կանցնի, ուրիշ մը կ'մտնես, վորսի շուն բե-  
րելով հետը:

— Ինձի՞ համար բերիք այդ շունը:

— Այո՛, տեր:

— Ի՞նչպէս ե այդ շունն. աղե՞կ ե:

— Շատ աղեկ ցեղեն ե, աղնվական տոհմեն ե:

— Ի՞նչ կուզեք ատոր համար:

— Չորս վոսկի:

— Յերեք վոսկի տամ: Պարոն գրագիր, սա շունն  
առ ե տուն տար:

Յե՛վ մեր գրագետները դեռ չեն ուզեր համոզվիլ,  
վոր մեր հարուստներն ամեն բանի ստակ կուտան բացի  
լրագրներէ ե գրքերէ: Բացառութեանս կան, բայց այն-  
չափ հազվագյուտ են, վոր արվեստահանդեսի մը զրկելու  
համար պահած եմ զանոնք:

### 5. Թ Ա Տ Բ Ո Ն

Յես ալ այսոր համոզվեցա, վոր թատրոնը մեծ մար-  
դերու դպրոց մ'ե:

Բայց մեծ մարդիկ ի՞նչ կուտանին այն դպրոցին մեջ:  
Խնդիրը հոս ե:

Թող ուրիշները պնդեն, թե բարոյականութուն կու-  
սանին հոն. յես կը պնդեմ, վոր թեպէտ ե բարոյականու-  
թեան դաս կը տրվի հոն, բայց աշակերտները մարմնա-  
կազմութեան դաս կ'առնեն, վասն զի հանդիսատեսները  
գերասանուհի մը ավիլի թեւերուն, պարանոցին, սրունք-  
ներուն կը դարձունեն իրենց ուշն, քան թե անոր արտա-

սանած խոսքերուն. ե յեթե դերասանուհի թեւերն գեղե-  
ցիկ գտնեն, կըսեն.— Շատ սքանչելի ներկայացում մ' եր:

Խե՛ղճ հեղինակներ... կը կարծեն թե իրենց գործը  
կը ծափահարվի... մինչդեռ շատ անգամ գերասանուհի  
հեղինակն ե, վոր կը ծափահարվի...

Վորչափ ալ պնդեն Չերմուանդ թատրոնասերներն,  
թե թատրոնը բարոյական դպրոց մ'ե, չեն կարող խախտել  
իմ համոզումըս, վոր ե՛ թե թատրոնն այսոր անդամազըն-  
նութեան դպրոց մ'ե:

Կյանքիս մեջ չեմ հանդիպած հանդիսականի մը, վոր  
թատերգութեան մը վերջին արարվածեն յետքը քովը նըս-  
տողին ըսէ:

— Ի՞նչ գեղեցիկ խոսքեր... ի՞նչ գաղափարներ ու  
սիրուն կտորներ, ի՞նչ հետաքրքրական տեսարաններ:

Բայց կյանքիս մեջ չեմ տեսած բարեպաշտ թատրո-  
նասեր մը, վոր թատրոնեն յելած ժամանակ ընկերին չըսէ.

— Ի՞նչ գեղեցիկ դերասանուհի... ի՞նչ սիրուն աչեր,  
ի՞նչ հետաքրքրական ծունկեր:

Արդ, իրավունք չունիմ պոռալու, թե գեղեցիկ դե-  
րասանուհի մը սքանչելի պիյեսա մ' ե:

Մայրաքաղաքիս մեջ տիկին Հրաչյայի աչերուն վրա  
Նեյլի աշտարակեն ավելի կխոսվի ե Հրաչյայի հայրն,  
հեղինակ այդ պիյեսային, Նեյլի աշտարակին հեղի-  
նակեն ավելի ծանոթ ե թատերասերներու:

Դուք ալ այսպէս պիտի մտածեյիք, յեթե ականատես  
ըլլայիք այն իրարանցումին, վորով քանի մը տնորեններ  
թաղե թաղ կը պտտին ազվոր գերասանուհիներ փընտ-  
ռելու համար: Այս յեղանակով կարելի՞ յե միթե ծաղկե-  
ցնել հայ թատրոնն, ուր գերասանուհիներն ազգային են,  
ներկայացումներն ոտար...

6. Հ Ո Գ Ե Վ Ո Ր Ա. Կ Ա. Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Չորս ամիսե ի վեր հանձնաժողով մը կա Պոլսո մեջ, վորու պաշտոնն է Յերուսաղեմի պարտքերը բառնալ:

Այս հանձնաժողովը չորս ամսե ի վեր չորս գրագիր փոխեց. ահա այն միակ գործն, զոր տեսալ չորս ամսու մեջ. յեթե ութ գրագիր փոխեր՝ ավելի մեծ գործ մը տեսած կըլար:

Սույն հանձնաժողովո ատենապետն է այնպիսի մարդ մը, վոր վոչ ինքզինքը կճանաչե և վոչ ղիմացինը...

Կը կարծվի, թե հանձնաժողով մ'ալ պիտի կազմվի այժմ հիշյալ հանձնաժողովը բառնալու համար:

Իսկ մենք կառաջարկենք, վոր հանձնաժողով մ'ալ կազմվի Յերուսաղեմի վանքը բառնալու համար. վասն զի քանի վոր վանքը մնա, պարտքն ալ պիտի մնա, և ազգն ալ ժամանակ չունի վանքերու պարտուց համար ահագին գումարներ վճարելու. յերեսուն հազար վոսկիով ազգը մեծ գործեր կարող է տեսնել:

Արհեստասիրաց ընկերութիւնն Մշո Ս. Առաքելոց վանուց մեջ յերկրագործական վարժարան մը պիտի բանա մոտերս:

Քիչ բացառութեամբ վանքերն մինչև այսոր մեյ մեկ ծուլարաններ են, ուր արժանապատիվ միաբանները կուտեն, կխմեն և կպառկին:

Ուրախ ենք, վոր Արհեստասիրաց ընկերութիւնն այս վանքերեն մին առնելով՝ բարենպատակ գործի մը պիտի հատկացնե զայն: Ո՛ւր եր, թե վանորեյից խորհուրդն մյուս վանքերն ալ միաբաններուն ձեռքեն առներ և աշխարհականներուն վարձու տար, վորպես զի այդ վանքերեն ալ քիչ մը ոգուտ քաղեր ազգը:

Միաբաններուն զալով անոնց համար անկելանոց մը

չինելու յե տեղ մը, վոր յերթան մեջը պառկին և բնավ չենեն: Հերիք է այս չափ տարիներե ի վեր ազգին ծառայեցին, քիչ մ'ալ հանգիստ ընեն...:

7. Կ Ե Ն Յ Ա. Ղ Ա. Յ Ի Ն

Լիքիտասիոն և Լիքիտասիոն (լիկվիդացիա):

Մայրաքաղաքիս մեջ չկա մի փողոց, ուր խանութի մը ճակատը ճերմակ լաթ մը քաշված չըլա և վրան Լիքիտասիոն գրված չըլա... Ամեն մարդ գործը մաքրելու կաշխտի՝ 60% գեղչով ապրանքները ծախել խոստանալով. վոմանք 90% գեղչ կընեն. և յեթե թվաբանական ճշմարտութիւնը խաբեյուլթյան չափ դրած չըլար, 110% գեղչ ալ պիտի ընեյին մեզ մեր պատվովոր վաճառականները:

Յե՛վ գիտե՞ք ինչ են այս Լիքիտասիոններու պատճառները:

Կճանաչեմ մին, վոր ճամբորդութեան պատճառով Լիքիտասիոն կընե տասը տարիյե ի վեր:

Ուրիշ մը գործեն քաշվելու միտք ունենալուն համար յուր վաճառատան ճակատը Լիքիտասիոն գրած է քսան տարիյե ի վեր:

Ուրիշներն ալ մեյ մեկ պատճառ գտած են ժողովուրդ խաբելու:

Կարող եմ ըսել, թե միայն Բ. դրան վրա Լիքիտասիոն չե գրված: Լավագույն չե՞ր ըլլար, յեթե քաղաքապետութիւնն այդ լաթերը ժողվել տար և մի մեծ լաթ կարել տալով՝ անոր վրա վոսկեգոծ տառերով Լիքիտասիոն ղներ և այդ լաթն իբրև դրոշակ մայրաքաղաքիս ղներուն վրա պարգեր:

Տիկինն թ...ին լուր կը տրվի, թե սեպտեմբեր յերեքին յուր աղջիկը տեսնելու համար քանի մը տիկիններ աղջիկ-տեսի պիտի գան:

Տիկինն թ...իրար կանցնի և անմիջապես աղջիկը կը կանչե:

Աղջիկը վազելով կուգա:

— Քեզ տեսնեմ, աղջիկս, կըսե տիկինն թ... աղվորիկ մը հագվե՛, սըգվե՛:

— Ի՞նչ կա, մայրիկ:

— Քանի մը հյուրեր պիտի գան այսոր, անոնց առջևը շատ մի՛ ինդար, վոր քաշել տված աղաններուդ տեղերը չերևան:

— Մայրի՛կ, դուն ալ միշտ աղաներս յերեսս կը զարնես. չորս աղա քաշելով ի՞նչ կըլլա յեղեր:

— Չե, վորդի, քուկին բարվույժ համար կը խոսիմ կոր. թևերուդ մեջ մեյմեկ կտոր բամբակ թխմե, վոր գեր յերևաս:

— Իմին կազմս ի՞նչ ունի վոր... տձե՞ եմ...

Դուռը կը զարնեն:

— Յեկան, յեկան,—կը պոռա մայրն և դուռը բանալու կը վազե, աղջիկն ալ հագվելու:

— Ա՛ս ե տունը,—կը հարցունեն հյուրերը դռան առջև:

— Ա՛ս ե, աս,—կը պատասխանե տիկինն թ... ներս հրամանեցեք:

— Մխարմամբ ուրիշ տուն մը չմտնե՞նք:

— Չե, չե, հոս պիտի գաք:

Հյուրերն, վորք յերեք տիկիններե կը բաղկանային, ներս կը մտնեն:

Պետք ե գիտնալ, վոր այս հյուրերն ընկերության մը անդամներ էյին, վորք տունե տուն պտրտելով տիկիններե զրամական նվեր կը հավաքեյին իգական սեռին դաստիարակության համար:

— Բարի յեկաք, մաղաւներ,—կըսե տիկինն թ...

— Բարի տեսանք,—կը պատասխանեն յերեք հյուրերն, վորոնց մինն քիչ մը կը սրդոդե մաղաւ բառին վրա, կերևի թե դրձուագեղ եր:

Աղջիկն, վոր աճապարանոք հագված եր, սենյակեն ներս կը մտնե և հյուրերու ձեռները կը թոթվե:

— Աղջի՛կս, ձեռք չպագնե՞ս:

— Տեր ողորմյա, այդ սովորությունը չկա հիմա,—կը պատասխանեն հյուրերը:

— Ինչո՞ւ չկա, թող տվեք, վոր ամենուդ ալ ձեռները զատ-զատ պագնե, մեղա, բերանը չմաշիր ա՛...:

— Շատ լավ:

— Մենք մեր մեծերեն ինչ վոր տեսեր ենք նե, անանկ կընենք: Չեոքես յեկածին չափ աշխատեցա, վոր աղջիկս կըթեմ. ֆրանսերեն ալ սորվեցուցի (աղջկանը դառնալով) աղջի՛կ, քիչ մը ֆրանսերեն խոսքեր չընես՝ մաղաւներուն հետ:

Հյուրերեն մին մաղաւ բառին վրա կես կանգուն վեր կը ցատկե նստած տեղեն:

— Բավական ձեռագործ ալ սորվեցուցի,—կը շարունակե տիկինն թ..., պարել ալ գիտե, յեթե կուզեք, պարեցեք հետը քիչ մը:

— Թող մնա այսոր, կը պատասխանե հյուրերեն մին և գրպանեն անդորրագիր մը կը քաշե, մատիտ մ՛ալ հանելով ծոցեն:

— Յեթե ուզեք, քիչ մը ֆրանսերեն խոսի՛...

— Շնորհակալ ենք... քանի՞ դահեկան գրենք, կը հարցնե հյուրերեն մին՝ մատիտն և անդորրագիրն ձեռքին մեջ բռնելով:

— Քանի դահեկա՞ն...

— Այո՛, ձեր կարողությանը համեմատ բան մը ըսեք:

— Ատոր խոսքը հորը հետ պիտի ըլլի:

— Հայրը ո՞ւր գտնենք. դուք գիտեք հարկավ, թե ինչ կրնաք տալ. ասիկա անանկ բան մ'ե, վոր ամսե ամիս պիտի առնվի:

— Ամսե ամիս ինչո՞ւ առնվի, ասանկ գործի մը յե՛նողը հարկավ առաջուց պատրաստած ե յուր տալիք ստակը: Բայց յես ալ ձեզի բան մը հարցունեմ, այս ստակն վորու վոր պիտի տանք նե՞ ան ալ գոնե դրամագլուխ մը ունի՞:

— Ինչ կրսեք, տիկին, հազար վոսկիի մոտ դրամագլուխ ունի այսոր:

— Հազա՞ր վոսկի...

— Այո՞:

— Իմ լսածս հազիվ հարյուր վոսկի ունի յեղեր:

— Սխալ ե, տիկին:

— Քանի՞ տարեկան բան ե սա, վոր հազար վոսկի ունենա:

— Հազիվ յերկու տարվան կա, տիկին:

— Ձիս կը ծաղրե՞ք կոր, մադամներ:

— Ծաղրելու ի՞նչ կա, տիկին:

— Ինձի ըսին, թե քառասունի մոտ ե յեղեր, և մորուքին մեջ ճերմակ ալ ինկեր ե:

— Ի՞նչ... մորո՞ւք... մեր ընկերությունը մորուք ալ ունի յեղե՞ր...

— Ձեր ընկերությունը...

— Հապա դուք վորո՞ւ համար կը խոսեյիք:

— Մեր փեսացուին համար չեյի՞ք խոսեր:

— Ներեցեք, տիկին, սխալմամբ հոս յեկած ենք...

պ. Ի...եանի տունն ո՞ւր ե:

— Մեր քովի տունն ե:

— Թողություն կընեք. մենք ընկերության մը համար դրամ հավաքելու յեկած ենք այսոր:

— Դուք ալ ներեցեք, յես ալ աղջիկ-տեսի համար հյուրերու կսպասեյի այսոր:

Հյուրերը կը բաժնավին տիկին թ...ե, վոր պատուհանին առջևը կանցնի կը նստի յուր բուն հյուրերը սպասելու:

Քանի մը ժամանակե ի վեր մայրաքաղաքիս մեջ ջղային հիվանդություն մը յերևան յեկած ե, և քիչ կնիկ կա, վոր այդ ախտին յենթակա չլինի:

Դեռ անցյալ շաբաթ եր, վոր փողոցե մը անցած ատեն ատիպվեցա մեկեն ի մեկ կանգ առնել՝ տունե մը հետևյալ խոսքերը լսելով.

— Շո՛ւտ ըրեք, ջո՛ւր բերեք:

— Կարապե՛տ, դուն բժշկին վագե:

— Քացախը բերե՛ք:

— Լիմոնը բերնին մեջը սխմեցե՛ք:

— Թորո՛ս, դեղագործին վագե:

— Մարկո՛ս, ինչո՞ւ կայներ ես, քահանային գնա:

Վախնալով, վոր զիս հոն տեսնելով ժամկոչին վագցնել կուտան, քիչ մը հեռացա և փողոցին ծայրը սպասեցի սա գործին վախճանը տեսնելու համար:

Քանի մը վայրկենեն յերկար գլխարկով բժիշկ մը հիշյալ տունը մտավ: Չայները դադրեցան: Յերեք վայրկյան ևս անցավ, և անա տան սպասավորն տունեն յելավ ձեռքն ունենալով թուղթ մը, վոր հավանականաբար բժշկին տված դեղագիրն եր: Դեղագործության քիչ մը ծանոթություն ունենալով՝ սպասավորին մոտեցա և աղաչեցի, վոր դեղագիրն տեսնեմ: Սպասավորն հաճեցավ և թող տվավ, վոր կարգամ դեղագիրն մեջ... անա կարգացածս.

«Ճերմակ գլխարկ մը,

Աջ կողմը սև փետուրներով զարդարված,

Չախ կողմը պզտիկ թռչուն մը,

Առջևի կողմը ծաղիկ մը,  
Յետևի կողմը խնձոր մը»:

(ստորագրութիւն) բժ. Գ. Ք.

Կյանքիս մեջ բնավ այսպիսի դեղագիր մը կարդացած չըլլալով հետաքրքրութիւնս փարատվելու տեղ ավելացավ: Հետաքրքրութիւնս իրավունք ունեւր ավելնալու, վասնզի գլխարկ մը, մանավանդ այդ տեսակ գլխարկ մը, վոր պարտեզե մը բնավ տարբերութիւն չունի, վոչ դեղահատի պես կը կըլլվեր, վոչ վերեն կը խմվեր և վոչ վարեն, ուստի սպասեցի բժշկին, վոր դուրս յեղնելուն պես մոտեցա իրեն և ներումս խնդրելով քաղաքավարութեամբ հարցուցի.

— Արդոք կընամ հարցունել, թե ով եր հիվանդը:

— Քսանամյա տիկին մը:

— Վտանգավոր ե հիվանդութիւնը:

— Վոչ... չնչին բան մը... արյունային գորութիւն մը... սանկ...

— Դեղ մը տվի՞ք:

— Այո՛... բայց ներեցեք, ավելի յերկար չեմ կարող խոսիլ, վասնզի հիվանդներ ունիմ նայելու, ըսավ և մեկնեցավ բժիշկը:

Նույն իրիկունը գործը կստուգեմ և կիմանամ, վոր այդ հիվանդ կինն որ մը առաջ յուր ամուսինեն գլխարկ կուզե և յերբ կը տեսնե, վոր ուզածը չե առնված, կորոչե, վոր ջղային հիվանդութիւն ունենա:

## Ծ Ի Ծ Ա Ղ

«Ներկա գործս պիտի խոսի կենդանիներուն վրա, ի բաց առնելով միայն այն կենդանին, վորուն մարդ կըսեն տանիններորդ դարուս մեջ» — այսպես ե բնորոշում իր այս գործը Հ. Պարոնյանը:

Սակայն Պարոնյանին զբաղեցնողը մարդկային թերութիւններն են իհարկե, և կենդանիների կողքին ու նրանց կերպարանքի տակ ընթերցողը տեսնում ե արատավոր մարդուն, մարդկային կենցաղի այլանդակ կողմերը: Ուրիշ խոսքով «Ծիծաղը» առականման հատվածների մի ժողովածու յե, վոր հետապնդում ե նույն նպատակն, ինչ վոր առհասարակ՝ առակաները:

«Ծիծաղ»-ից տալիս ենք միայն յերեք հատված. —

1. «Մըջյուններուն բողոքագիրը» — դա ներկայացնում ե «Հայոց հարցը» Բերլինի դեսպանաժողովում 1878 թ. և ծաղրում Խրիմյան և Նար-բեյ պատգամավորների անպտուղ առաքելութիւնը:

2. «Նկատողութիւն» — բյուրոկրատիզմի տիպիկ նմուշ:

3. «Սոխն և սոխակը» — լրագրական մի որինակ:

Հատվածները տալիս ենք վորոշ կըճատումներով:

Հ. Հով.

ՄՐՁՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԲՈՂՈՔԱԳԻՐԸ

Մըջյուններն բողոքագիր մը մատուցանելով կենդանիներուն ավագաժողովին՝ կը գանգատին մեծ անիրավութեան մը դեմ, վոր կը գործվի, կըսեն, բնավ նկատողութեան չառնելով այն հալածումներն ու կոտորածներն, վոր

րոնց առարկա կը լինեն, առաթուր կոխվելով շարունակ այն արարածներեն, վորք իրանց կոխած տեղը չեն նայիր: Բողոքարկուններն կը հայտնեն նաև, թե իրենք առաջին գաղթականներուն հետ յերեցած են յերկրիս վրա և իրենց գոյությունը պահած լինելով՝ իրավունք ունին հզոր կենդանիներուն համակրությանը: Կը խնդրեն վերջապես, վոր իրենց բողոքն նկատողության առնվի և արժանն անորին վի: Կաղաչեն միանգամայն ավագաժողովին, վոր բարեհաճի ընդունել իրենց խորին հարգանաց և մեծարանաց հավաստիքն, վորով կը մնան ամենախոնարհ ծառաներ ավագաժողովին ատենապետին:

Բողոքագիրն բավական կեղծավորությամբ խմբագրված եր:—Ավագաժողովին դիվանն սույն բողոքն գիրն խնդրոց կարգը կանցունե և քանի մը շաբաթ յետքը խընդիրն վիճաբանության կը դրվի: Չմոռնանք հիշելու, վոր ավագաժողովին ներկայանալու համար մըջյուններուն կողմեն կը զրկվին յերկու պատգամավորներ, վորոնց արտոնություն կը տրվի դոնեն դուրս նստիլ աթոռի մը վրա և վիճաբանության վրա իրենց դիտողություններն, յեթե ունենան, ներկայացնել դոնապանին: Պատգամավորներն այս շնորհը կը հաղորդեն մըջյուններուն: Ամեն կողմ ուրախություն, ցնծություն և բերկրություն: Ատենապետը կը հրավիրե ժողովականները կարգավ խոսք առնել և կարծիք հայտնել ներկայացված խնդրույն վրա, զոր նախապես կամփոփե հետևյալ կերպով.

Ասեմապետ.—Ինչպես իմացանք կարգացված բողոքագրեն մըջյուններն իրենց հնությունն հիշելով կը խնդրեն վոր վերջ տրվի իրենց դեմ յեղած հալածումներուն և արտոնություն տրվի իրենց գիշակեր և ընտանի կամ արվեստագետ և հանճարեղ կենդանիներու պես ապրիլ, ուստի խոսք առնող յերեսփոխանները կը հրավիրվին հայտնել իրենց կարծիքն այս խնդրույն նկատմամբ:

Փիղ.—Կարևորութենե զուրկ ասանկ խնդրո մը վրա, վոր կատակերգության նյութ միայն կընա ըլլալ, կարծիք հայտնելն իմ արժանապատվությանս կը դիպչի:

Ա. Պատգամաւոր.— (Առ դոնապանն) Ինչո՞ւ կղպչի արժանապատվությանը:

Բ. Պատգամաւոր.— (Առ դոնապանն) Ի՞նչ իրավունք ունի մեր խնդիրը վիրավորելու:

Յեզն.—Մըջյուններն այս բողոքագիրն իրենք իրենց մատուցանելու եյին և յեթե կարող եյին յերևելի կենդանիներու պես ապրիլ՝ անմիջապես սկսելու եյին անոնց պես կյանք վարել, ո՞վ կարգիլեր գիրենք:

Ա. Պատգ.— (Առ դոնապանն) Յեզն չըմբռնեց բողոքի իմաստն. յես աջակցություն խնդրելու յեկա:

Բ. Պատգ.— (Առ դոնապ.) Յես ալ վոտանավոր շինելու յեկա:

Փիղ.—Գիշակեր կենդանիներու պես ապրելու համար անոնց պես սիրտ, արիություն և դյուցազնություն ունենալու յե, մինչդեռ այս միջատներն ամեն ոք, ամեն տեղ, մանավանդ փողոցներու մեջ վոտնակոխ կըլլան վոտից ամաններու տակ:

Ա. Պատգ.— (Առ դոնապանն) Այսու ամենայնիվ մեր գոյությունն պահած ենք և շարունակ աշխատած մեր տեսակն աճեցնելու և բացմացնելու. մեր մեջ կին մը չորս ամսվան մեջ յոթը հազար հավկիթ կածե և կարծեմ տկարության նշան չե այս յերևույթը:

Բ. Պատգ.— (Առ դոնապանն) Յեթե քաջալերություն գտնենք, կընանք մեր կիներուն տասնչորս հազար հավկիթ ածել տալ, սակայն ցավալի յե, վոր այս կետը բնավ ուշադրության չառնվիր անոր դյուցազնական նշանակությունն կը կորսվի և աշխարհիս ամենեն դյուրին բանը կը կարծվի:

Մեղա.—Շատ ծիծաղելի յե արդարև մըջյուններուն

այս պահանջումն, կարծես թե ընկերություններ կազմելով մեզը շինած են:

Ա. Պատգ.—(Առ դռնապանն) Ով մեզի չափ ընկերություններ կազմած է:

Բ. Պատգ.—(Առ դռնապանն) Մանավանդ ո՞վ մեզի չափ ընկերություններ կործանած է, նորեն շինած է և վերստին քանդած է. ըսել է, թե ընկերություններուն ոգուտը ճանչցողներեն ենք:

Չերա՞ն.—Ասանկ առաջարկություն մը բերելու համար գոնե մետաքսի նման բան մը պատրաստել գիտենային:

Ա. Պատգ.—(Առ դռնապանն) Մեր հնությունը բնավ կարևորություն չունի՞:

Սոխակ.—Գոնե գեղեցիկ ձայն մը ունենային:

Սիրաճարգ.—Գոնե գեղեցկություն մը ունենային:

Չայնէր.—Ծիծաղի քվե, ծիծաղի քվե...

Ա. Պատգ.—(Առ դռնապանն) Մեր գոյությունը պահած ենք... Ի՞նչ կըլլա, յեթե սոխակը մեզի համար յերգեքիչ մը, մեղուն մեղր տա մեզ, փիղն իր ուժովն ոգնե...

Չայնէր.—Ծաղու քվե... քվե...

Յեզն.—Կը կրկնեմ քվե...

Չայնէր.—Քվե, քվե, քվե...

Ասե՛նապետ.—Քանի վոր ամեն կողմե քվե կաղաղակեն, կատիպվիմ ժողովուն կամացը հնազանդիլ և խընդիրը քվեյի զնել սա բանաձևով. «Նկատելով, վոր մըջյուններն առանց զգալու իրենց տկարությունը և ուրիշներուն հասնելու բարի նախանձով անանկ պահանջումներ կընեն, վոր ծաղը շարժելեն ուրիշ բանի չեն ծառայեր, ժողովս կորոշե մըջյուններուն սույն առաջարկությանը վրա յերկու շաբաթ խնդալ»:

Փիղ.—Պայմանաժամը քիչ է, յերկու տարի խնդալ:

Մեղու.—Տասը տարի ծիծաղիլ:

Յեզն.—Հարյուր տարի խնդալ:

Ասե՛նապետ.—Այս առաջարկությունները քվեյի կրնեմ:

Խնդիրը քվեյի գրվելով մեծամասնությամբ կորոշվի հիսուն տարի խնդալ: Պատգամավորները կը մեկնին ախուր և կուզան մըջյուններուն ավետել, վոր այս ձեռնարկութենե բան մը չկորուսին, նամանավանդ մեծ շահ մը ըրին մըջյուններուն մեծ կենդանիներուն ճանչցնելով:

#### ՆԿՍՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Գորտերու խորհուրդը ուսուցիչ պատրաստելու սահմանված վարժարանի մը ծրագիր կը խմբագրե և կը հանձնե զայն գորտերու գործիչ ժողովուն, վոր անմիջապես կը պատասխանե, թե նկատողության առնված է...

Խորհուրդն ուրախութենե կերգի, քիչ մ՞ալ կը պարե, վորովհետև շատուց ի վեր նկատողության առնված չէր ասանկ ծրագիր մը:

Մեկ յերկու ամիսներ կգլորին, կանցնին: Ի՞նչ փաստունի. չե՞ վոր նկատողության առնված է: Բայց խորհուրդն անհամբեր է, կփափագի գիտնալ, թե ինչ արդյունք ունեցավ այդ նկատողությունն. ուստի որ մը կներկայանա գործող ժողովուն և կը հարցունե.

— Ի՞նչ յեղավ մեր ծրագիրն:

— Վո՞ր ծրագիրն:

— Վարժապետանոցի ծրագիրը:

— Մենք անանկ բան չտեսանք: Դիվանագարին հարցունենք, նայենք ինչ յեղեր է այս ծրագիրն: Դուք քիչ մը նստեցեք:

Դիվանապետը կուզա:

— Այս գորտերուն ծրագիրն ո՞ւր է:

— Հոս է:

Դիվանապետը կերթա զիվանատուն, յերկու ժամվան մեջ գտնել կուտա ծրագիրն և վրայի փոշիներն մաքրելով ներս կը տանի:

այս պահանջումն, կարծես թե ընկերություններ կազմելով մեզը շինած են:

Ա. Պատգ.—(Առ դռնապանն) Ով մեզի չափ ընկերություններ կազմած է:

Բ. Պատգ.—(Առ դռնապանն) Մանավանդ ո՞վ մեզի չափ ընկերություններ կործանած է, նորեն շինած է և վերստին քանդած է. ըսել է, թե ընկերություններուն ոգուտը ճանչցողներեն ենք:

Չերաւ.—Ասանկ առաջարկություն մը բերելու համար գոնե մետաքսի նման բան մը պատրաստել գիտենային:

Ա. Պատգ.—(Առ դռնապանն) Մեր հնությունը բնավ կարևորություն չունի:

Սոխակ.—Գոնե գեղեցիկ ձայն մը ունենային:

Սիրաւնարգ.—Գոնե գեղեցկություն մը ունենային:

Չայներ.—Ծիծաղի քվե, ծիծաղի քվե...

Ա. Պատգ.—(Առ դռնապանն) Մեր գոյությունը պահած ենք... Ի՞նչ կըլլա, յեթե սոխակը մեզի համար յերգե քիչ մը, մեղուն մեղր տա մեզ, փիղն իր ուժովն ոգնե...

Չայներ.—Ծաղու քվե... քվե...

Յեզն.—Կը կըկնեմ քվե...

Չայներ.—Քվե, քվե, քվե...

Ասեճապետ.—Քանի վոր ամեն կողմե քվե կազադակեն, կստիպվիմ ժողովույն կամացը հնազանդիլ և խընդիլը քվեյի դնել սա բանաձևով. «Նկատելով, վոր մըջյուններն առանց զգալու իրենց տկարությունը և ուրիշներուն հասնելու բարի նախանձով անանկ պահանջումներ կընեն, վոր ծաղը շարժելեն ուրիշ բանի չեն ծառայեր, ժողովս կորոշե մըջյուններուն, սույն առաջարկությանը վրա յերկու շաբաթ խնդալ»:

Փիղ.—Պայմանաժամը քիչ է, յերկու տարի խնդալ:

Մեղու.—Տասը տարի ծիծաղիլ:

Յեզն.—Հարյուր տարի խնդալ:

Ասեճապետ.—Այս առաջարկությունները քվեյի կընեմ:

Խնդիրը քվեյի դրվելով մեծամասնությամբ կորոշվի հիսուն տարի խնդալ: Պատգամավորները կը մեկնին ախուր և կուզան մըջյուններուն ավետել, վոր այս ձեռնարկութենե բան մը չկորուսին, նամանավանդ մեծ շահ մը ըրին մըջյուններուն մեծ կենդանիներուն ճանչցնելով:

#### ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Գորտերու խորհուրդը ուսուցիչ պատրաստելու սանձամոված վարժարանի մը ծրագիր կը խմբագրե և կը հանձնե զայն գորտերու գործիչ ժողովույն, վոր անմիջապես կը պատասխանե, թե նկատողության առնված է...

Խորհուրդն ուրախութենե կերգի, քիչ մ'ալ կը պարե, վորովհետև շատուց ի վեր նկատողության առնված չեր սասնկ ծրագիր մը:

Մեկ յերկու ամիսներ կգլորին, կանցնին: Ի՞նչ վաս ունի. չե՞ վոր նկատողության առնված է: Բայց խորհուրդն անհամբեր է, կփափագի գիտնալ, թե ինչ արդյունք ունեցավ այդ նկատողությունն. ուստի որ մը կներկայանա գործող ժողովույն և կը հարցունե.

— Ի՞նչ յեղավ մեր ծրագիրն:

— Վո՞ր ծրագիրն:

— Վարժապետանոցի ծրագիրը:

— Մենք անանկ բան չտեսանք: Դիվանադպրին հարցունենք, նայենք ինչ յեղեր է այս ծրագիրն: Դուք քիչ մը նստեցեք:

Դիվանապետը կուզա:

— Այս գորտերուն ծրագիրն ո՞ւր է:

— Հոս է:

Դիվանապետը կերթա դիվանատուն, յերկու ժամվան մեջ գտնել կուտա ծրագիրն և վրայի փոշիներն մաքրելով ներս կը տանի:

- Ահա վասիկ ծրագիրն:
- Հրամեցեք, առեք ձեր ծրագիրն և վստահ յեղեք, վոր այստեղ բան մը չկորսվիր, առանց կասկածի կրնաք ուրիշ ծրագրեր ալ բերել հոս, յեթե ունիք:
- Մենք ծրագիրն յետ առնելու համար չեկանք հոս:
- Ի՞նչ բանի համար յեկաք ուրեմն:
- Հասկնալու համար, թե ինչ ըրիք այդ ծրագիրն:
- Ի՞նչ պիտի ընենք, յեղբայրնե՛ր, ձեր ծրագիրն իննամբով պահված ե գիվանադպրին քով: Ձեր ծրագիրն ուտելու չենք...
- Ատ ըսել չենք ուզեր:
- Ի՞նչ ըսել կուզեք հապա:
- Ի՞նչ վորոշում տրվեցավ այդ մասին:
- Վորոշո՞ւմ պիտի տրվեր այդ մասին:
- Ձեյի՞ք գիտեր...
- Դիվանադպիր, ի՞նչ վորոշում կա այդ մասին:
- Նկատողութեան առնված ե, — կպատասխանե գիվանադպիրն:
- Ուրեմն գործը մեզմե յելած ե, կըսե գործողն, ինչպես կը լսեք, նկատողութեան առնված ե յեղեր: Գործերն հոս ուղղութեամբ և կանոնավորութեամբ կընթանան:
- Յե՞րբ գանք պատասխան առնելու:
- Իկոնոմոսին պիտի հանձնվի, կըսե դպիրն, և կրնաք ամիսե մը դիմել անոր՝ պատասխան ընդունելու համար: Խորհուրդն այս պատասխանն առնելով կը հեռանա և ամիս մը յետքը կը ներկայանա Իկոնոմոսին.
- Ծրագիր մը յեկա՞վ հոս:
- Քանի՞ տարեկան:
- Տարիքն ի՞նչ ե, ծրագիր մը չեկա՞վ հոս:
- Բա՞րձր հասակով:
- Ծրագիր մը տարիք, հասակ կունենա՞:
- Ինչո՞ւ չունենա, գո՛ւյն անգամ կունենա: Յես

- ծրագիրներ ցույց տամ ձեզ, վոր քառասուն տարվան են և հոս կմնան. անանկ ծրագիրներ, վոր յերեք ու կես կանգուն բարձրութիւնն ունին և փոշիներու մեջ թաղված մնալով անանկ սեցեր կամ դեղնցեր են, վոր ճանչցվելու համար մեծ նեղութիւնն կը կրեն: Ատոր համար կը հարցունեմ, թե քանի՞ տարեկան ե ձեր ծրագիրն:
- Մերինը դեռ յերեք ամսու յե:
- Կաթնակեր տղա մ՞ե չըսե՞ք, դեռ շատ պզտիկ ե:
- Այո՛:
- Ի՞նչ կուզե այդ ծրագիրն:
- Վարժապետանոց մը, վորու մեջ գորտերեն վարժապետ պիտի համնի:
- Շատ աղեկ խորհեր եք:
- Ընդունեցի՞ք անանկ ծրագիր մը:
- Դպիրեն կրնանք տեղեկանալ: Դպիր, ստացա՞նք անանկ ծրագիր մը:
- Այո՛, ստացանք, կը պատասխանե դպիրն:
- Այո՛ ստացանք, կը կրկնե Իկոնոմոսն:
- Ի՞նչ խորհեցաք ատոր վրա:
- Դպիր, ինչ խորհեցա անոր վրա. կը հարցնե Իկոնոմոսն:
- Նկատողութեան առնվեցավ, կը պատասխանե դպիրն:
- Նկատողութեան առնվեցավ կը կրկնե Իկոնոմոսն:
- Վորչա՞փ պիտի մնա նկատողութեան մեջ:
- Հարկ յեղածն կը խորհվի:
- Յե՞րբ:
- Պարտ ու պատշաճն կը տնորինվի:
- Քանի՞ որեն:
- Առաջին առթիվ:
- Յե՞րբ կը ներկայանա այդ առիթն:
- Առիթն կը հղվի ում անկ ե:

- Չեմ հասկնար:
- Չայս կը հաղորդեմք ձեզ ի գիտութիւնս:
- Ի՞նչ ըսել ե ի գիտութիւնս:
- Յե՛վ կը խնդրեմք:
- Ի՞նչ կը խնդրեք:
- Վոր ընդունիք մեր խորին հարգանաց հավաստիքն, վորով մնամք ի դիմաց Իկոնոմոսի ամենախոնարհ ծառայք:

ՍՈՆՆ ՅԵՎ ՍՈՆԱԿՆ

Ծիծաղ.— Հոս յեկուր Իպպո՛ս, խնդալու արժանի դեպք մ՛ալ յես պատմեմ քեզի:

Իպպոս.— Շատ աղեկ, պատմե՛:

Ծիծաղ.— Տղրուկն որ մը կհրատարակե յուր լրագրույն մեջ, թե սոխակն խելագարելով ինքզինքն գետի մեջ նետեր ե և խեղդվեր ե: Քանի մը շաբաթ յետքը այս խելագար և խեղդված սոխակն ինձի կը ներկայանա:

— Աս ի՞նչ ե, կըսեմ, դուն խելքդ փախուցած չե՞ս, ինքզինքդ գետ նետած չե՞ս, խեղդված չե՞ս:

— Չե, վոչ խելքս փախուցած եմ և վոչ ալ մեռած:

— Հապա տղրուկն այդպե՞ս գրած եր...

— Վորո՞ւ հոգ, վորո՞ւ հոգ...

— Մարդեր կան, վոր քեզի վողջ առողջ ալ տեսնելու ըլլան, չպիտի հավատան, վոր դուն մեռած չես. վասն զի անոնք լրագրական լուրերուն մեծ հավատք կընծայեն: Բացի ասկե, կարելի յե վոր ձայնավորութեան համար քեզի պետք ունենան և զքեզ մեռած կարծելով ուրիշ մը կանչեն: Գնա տղրուկին, հասկցուր իրեն, թե վողջ ես և աղաչե, վոր այդ սխալն ուղղե:

Սոխակն տղրուկին կը դիմե.

Սոխակ.— Ծառայեմ, պարոն Տղրուկ:

Տղրուկ.— Բարի յեկար, կարծեմ բաժանորդ գրվիլ կուզես:

Սոխակ.— Վոչ, սխալ մը ուղղելու յեկա:

Տղրուկ.— Ի՞նչ սխալ:

Սոխակ.— Ինձի համար գրած եք, վոր գետին մեջ նետվեր, խեղդվեր ե:

Տղրուկ.— Այո՛, գրեցի:

Սոխակ.— Մխալ ե:

Տղրուկ.— Անկարելի յե, վոր սխալ ըլլա, յես լուրերս ստույգ աղբյուրներե կը քաղեմ. իմ տված լուրերուս մեջ սուտ չկա:

Սոխակ.— Բայց յես վողջ եմ:

Տղրուկ.— Ատ իմ գիտնալու բանս չե. դուն մեռած յես ինձի համար...

Սոխակ.— Սակայն իմ շահուս կը դպչիս, յեթե չուղղես այդ լուրն. յես ձայնավորութեամբ կապրիմ. և յեթե չգիտնան, թե յես վողջ եմ, չեն կանչեր զիս:

Տղրուկ.— Վորո՞ւ փուլթ, յես չեմ կընար իմ տված լուրս ուղղել և լրագրույս պատվույն փասել: Մանավանդ թե դուն բաժանորդ ալ չես ինձի:

Սոխակ.— Բայց...

Տղրուկ.— Բայց չկա, խնդիրն աս ե:

Սոխակ.— Բաժանորդ մը կը գրվիմ:

Տղրուկ.— Դուն իմ միտքս չհասկցար, յես ըսել կուզեմ, թե այնպիսի ձևով մը շտկենք աս լուրն, վոր վոչ քեզի փասե, վոչ ալ ինձի:

Սոխակ.— Հասկցա:

Տղրուկ.— Քանի՞ տարվան համար բաժանորդ պիտի գրվիք:

Սոխակ.— Մեկ տարվան համար:

Տղրուկ.— Շատ լավ. յես անանկ հողված մը կը գրեմ, վոր վոչ քեզի, վոչ ալ ինձի դպչի: Բաժանորդագինն կանխիկ ե:

Սոխակ.— Հրամմեցեք:

Տղրուկ.— Գնացեք և վաղը կը կարդաք. յես կուղղեմ այդ սխալն ինչպես պետքն ե ուղղել, յերբ բաժանորդագին մը միայն վճարե մեկը:

Հետևյալ որը Տգրուկին լրագրին մեջ սոխակը կը կարդա  
սա տողերն. «Ասկե առաջ հրատարակած էյինք, թե սո-  
խակն գետի մը մեջ խեղդված է. վերջեն առնված արժա-  
նահավատ լուրերեն բերկրությամբ կիմանանք, վոր այդ սո-  
խակն հարութունն առեր և մայրաքաղաքս վերադարձեր է»:

Այս տողերուն վրա, սոխակն տգրուկին կը գիմե:

Սոխակ.— Աս ի՞նչ ես ըրեր:

Տգրուկ.— Այնպիսի վարպետությամբ մը գրեցի, վոր  
մեր յերկուքին շահերն պաշտպանվեցան:

Սոխակ.— Բայց այդ վարպետության հավատացող  
չկա. ամենքն զիս մեռած կը կարծեն նորեն:

Տգրուկ.— Ի՞նչ ընեմ, ուրիշ կերպ կարելի չէ...

Սոխակ.— Չե՞ս կրնար գրել, թե մեր առաջի տված  
լուրն անհիմն է և թե սոխակն վոչ խելքը փախուցած է,  
վոչ ալ գետի մեջ խեղդված:

Տգրուկ.— Անկարելի յէ. վերջեն ինձի մատի վրա  
հառնեն: Սակայն ուրիշ կերպով կրնանք ուղղել այդ սխալն,  
յեթե բաժանորդագին մ'ալ վճարեք:

Սոխակ.— Կը վճարեմ:

Տգրուկ.— Շատ լավ, յես ալ կը հրատարակեմ, վոր խելքն  
փախուցած և խեղդված կենդանին սոխ մ'ե յեղեր, վոր տպա-  
գրական սխալմամբ սոխակ գրվեր է: Ասոր ըսելիք ունի՞ս:

Սոխակ.— Վոչ, բավական է վոր յես չխեղդվիմ. կուզե  
սոխը խեղդվի, կուզե սխտորը խենթենա: Մնաք բարով:

Տգրուկ.— Յերթաք բարով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

I ՊՐԱԿ.—1) Հակոբ Պարոնյան (կենսագրական): 2) Մեծապատիվ մու-  
րացիաններ: 3) Պտույտ մը Պոլսո թողերու մեջ: II ՊՐԱԿ.—1) Արևելյան  
ատամնաբույժ: 2) Պագասար աղբար: 3) Քաղաքավարության ֆուսաները:  
III ՊՐԱԿ.—1) Ազգային ջոջեր: 2) Հոսոսի ձեռատետրը: 3) Միծաղ:



ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

24642

50131



---

---

**Ա. ՓԱՐՈՆՅԱՆ.**

**Իզբրանն. սոչինենիա.**

**Վըքսն ՅՅ.**

---

---

Ոա արմանսոմ յա.

---

---

Շենտրալնոե Իզատելստվո ՈարոճոՎ Տոյազ Տ. Տ. Ր.  
Մոսկա, Ոնկոլսկայա, 10.